Փետր. 8. «Վաղվնէս պատիւ ի Կոմիտասենց. Դմպուկն (Աստուածատուր վրդ.) Մխիթարին (վրդ.) էր գացեր. բայց Մարտիրոս եպիսկոպոսն, Պախչին, Դէորգն (Տէր Մարտիրոս), Ցարութիւնն եւ մեք ե սահաթ նստաք» (անդ)։ — Փետր. 10. «Բշ. Պաս Առաջաւորաց։ Գիշերս լաւ ուրախութիւն վարդապետք՝ ես, Դմպուկն, Նվիրակն, Մարտիրոս եպիսկոպոսն, Իզմիրցին, Խաչատուր աբեղան, Կոմիտասն, ե սահաթ նստաք և մեծ մեծ տօլիք քշեցաք» (անդ)։ — Փետր. 20. «Գնացաք ի Մախրգեղն ի ծովեզրն մինչեւ երեկոյ եւ ընդ մեզ Դմպուկն, Հարոնն, Պախչին, Գէորգն (Տէր Մարտիրոս), Նշաստաճի Ցարութիւնն, Կոմիտասն, եւ մերոնք թիվք ԺԳ. գնալ եւ գալն ծովով» (թղ. 252բ)։ — Փետր. 25, ե. Ղեւոնդեանց. «Գնացաք ծովով ի Մախրգեղ, Դմպուկն կայր ոչ, Մարտիրոս եպիսկոպոսն, Կոմիտասն, Պախչին, Գէորգն (Տէր Մարտիրոս), Հարոնն, Էրէցն, Զօլախն, Զարգանն, Դաւիթ Էրէցն, Ցարութիւնն։ Ցունաց աբեղա մի եւ տղա մի գիտուն՝ եկին բան ասացին. եւ ե սահաթին ելաք . . . եւ եկաք յեկեղեցին (Ս. Գէորգ), ի դուրսն ի հավուզին վերայ նստաք ամենեքումբ եւ տղայքն խաղացին. գառ ճաշակեցաք. լաւ ջեր էր» (անդ)։

Ամդեցի նորոգած ըլլալով իր պատրիարքական հրովարտակը՝ 1701 Սեպտ. 1ին, իրեն ուղեկից ունենալով Տէր Կոմիտասը(1), նաւով ճամբայ կ'ելլէ Կ. Պոլսէն, 13ին կը հասնի Ցոպպէ, մինչև ամսուն 23ը հոն կը սպասէ և 27ին կը մտնէ Երուսաղէմ։

---

(1) Հայր Յովհ. վրդ. Մըսըրեան իր **Երանելի Տէր Կոմիտաս Քէօմիւրճեան** գրքոյկին մէջ (Պէյրութ, 1929) կը գրէ թէ Կոմիտաս քահանայ յարուցուած հալածանքներու երեսէն փախուստ տալու համար «նաւը մտնելով կը քաշուի Երուսաղէմ ու կ'ապաստանի Հայոց Ս. Յակոբ վանքը» (էջ 9)։ Սակայն Ամդեցիի **Օրագրութենէն** որոշ կ'երևի թէ ան Երուսա-